ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող., 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2025թ. № 66-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՍՎԵՐԴԼՈՎ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 8/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԾԱԾԿԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի մասերով, ՀՀ կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով 20.02.2025թ.-ին տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 20022025-06-0066 վկայականը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք գյուղ Սվերդլով 1-ին փողոց 8/2 հասցեում գտնվող 06-101-0052-0026 կադաստրային ծածկագրով, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող՝ **43.48**քմ և **32.26**քմ մակերեսով ծածկերը **51850** /երեսունչորս հազար վեց հարյուր/ ՀՀ դրամով, և շինություններով զբաղեցված ու սպասարկման համար նախատեսված ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող **0.17472**հա մակերեսով հողամասը կադաստրային արժեքի սահմանված չափով՝ **174720** /մեկ հարյուր յոթանասունչորս հազար յոթ հարյուր քսան/ ՀՀ դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարել Էդվարդ Մելսիկի Մկրտչյանին:

2. Ծածկերի համար օտարման գումարը անհրաժեշտ է վճարել համայնքապետարանի **900255001324** հաշվեհամարին, իսկ հողամասի օտարման համար կադաստրային արժեքի վճարման գումարը, անհրաժեշտ է վճարել համայնքապետարանի **900255114135** հաշվեհամարին:

3. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Մեկամսյա ժամկետում Էդվարդ Մելսիկի Մկրտչյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել շինությունների և հողամասի առուվաճառքի պայմանագիր:

5. Պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

Կատ՝ Լ. Մանասարյան
հեռ՝ 098 28 92 92

2025թ. մարտի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2025թ. № 67-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի 06-105-0024-0001 կադաստրային ծածկագրի անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Ուռուտ, 7-րդ փողոց, 1-ին փակուղի թիվ 3 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

2025թ. մարտի 18
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
Գ. Լոռի Բերդ Աշոտ Երկաթի 7

Հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2025թ. № 68-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի 06-044-0018-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գյուղ Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փողոց, 1-ին փակուղի, թիվ 6 բնակելի տուն փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ.

2025թ. մարտի 18
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող., 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«18» մարտի 2025թ. № 69-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՈՎԱՃՈՐ ԳՅՈՒՂԻ 06-025-0112-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 6.93 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ 6.12244 ՀԱ ԵՎ 0.80756 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՆԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով «ՏԱՐՈՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐԹՈՒՐԻ» ԱՁ-ի կողմից կազմված հողամասի բաժանման հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի 06-025-0112-0006 կադաստրային ծածկագրով հողամասի բաժանումից առաջացած 6.12244հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Բովաձոր, 9-րդ փողոց, 1 անասնաշենք փոստային հասցեն:
2. Հաստատել Լոռի Բերդ համայնքի Բովաձոր գյուղի 06-025-0112-0006 կադաստրային ծածկագրով հողամասի բաժանումից առաջացած 0.80756հա մակերեսով հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Բովաձոր, 9-րդ փողոց, 1/2 անասնաշենք փոստային հասցեն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.

կատ.՝ Լ. Մանասյան
հեռ.՝ 098-28-92-92

2025թ. մարտի 18
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 20 » մարտի 2025թ. № 70-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին»ՀՀ օրենքի38-րդ հոդվածի1-ին մասի7-րդ, 8-րդ կետերի և «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 25.12.2024թ. թիվ 80-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետի՝

որոշում եմ.

1.Լոռի Բերդ համայնքի 2025թ. բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1. 01-01-01դասակարգմամբ«կառավարման ապարատ» նախահաշվի 4729 հոդվածից 1.000.000 (մեկ միլիոն) դրամը տեղափոխել 4222 հոդված և ըստ եռամսյանների հոդվածները սահմանել հետևյալ չափերով.

4222 հոդվածի մասով.
1-ին եռամսյակ – 1.000.000 (մեկ միլիոն) դրամ,
2-րդ եռամսյակ – 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:

4729 հոդվածի մասով.
1-ին եռամսյակ – 0 (զրո) դրամ,
2-րդ եռամսյակ – 1.500.000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,
3-րդ եռամսյակ – 2.750.000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 4.000.000 (չորս միլիոն) դրամ:

1.2. 06.03-01դասակարգմամբ«ջրամատակարարում» նախահաշվի 4213 հոդվածով սահմանված 7.660.000 (յոթ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 3.200.000 (երեք միլիոն երկու հարյուր հազար) դրամ,
2-րդ եռամսյակ – 4.850.000 (չորս միլիոն ութ հարյուր հիսուն հազար) դրամ,

3-րդ եռամսյակ – 6.760.000 (վեց միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) դրամ,
4-րդ եռամսյակ – 7.660.000 (յոթ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) դրամ:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

կ.տ.

2025թ. մարտի 20
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » մարտի 2025թ. № 71-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի կողմից 20.03.2025 թվականին ներկայացված դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի ջրամատակարարման ցանցի և կոյուղու համակարգի կառուցման նպատակով կառուցապատող՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանին օրենսդրությամբ սահմանված կարգով տալ շինարարության թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.տ

2025թ. մարտի 21
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 21 » մարտի 2025թ. № 72-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 02.02.2002 թվականի թիվ 91 որոշմամբ, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի կողմից 20.03.2025 թվականին ներկայացված դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի ջրամատակարարման ցանցի և կոյուղու համակարգի կառուցման նպատակով կառուցապատող՝ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանին օրենսդրությամբ սահմանված կարգով տալ շինարարության թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2025թ. մարտի 21
գ. Լոռի Բերդ